2022-2023 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

I

Օտար լեզուների մեթոդական միավորման աշխատանքները սկսվել են օգոստոսին:Առաջին նիստի ընթացքում մեթոդական միավորման բոլոր անդամների մասնակցությամբ կազմվել է աշխատանքների պլան 2022-2023 ուստարվա համար: Մեթոդական միավորմը բաղկացած է 5 ուսուցիչներից,ովքեր դասավանդում են անգլերեն և ռուսաց լեզու առարկաները : Դեռևս նախորդ ուսումնական տարվա վերջում մեթոդական միավորմը դպրոցի մանկխորհրդին առաջարկել է ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչից դասաժամեր հատկացնել, <<Անգլերեն>>,4-րդ,6-րդ դասարաններում և <<Ռուսերեն>>,2-րդ,3-րդ,4-րդ դասարաններում մեկական ժամ :

Այնուհետև կատարվել է վերջնական դասաբաշխում:Առարկայական մեթոդմիավորման բոլոր անդամները նշված ժամկետում կազմել են թեմատիկ պլաններ՝ դրանք համապատասխանեցնելով փոփոխված պետական ծրագրերին և չափորոշիչներին,այնուհետև ներկայացվել է տնօրինությանը հաստատման:

Օգոստոսի 20-ից նոյեմբերի 24-ը անգլերենի ուսուցչուհի Մ. Ավետիսյանը մասնակցել է պարտադիր վերապատրաստման դասընթացներին:

Դեկտեմբեր ամսին անցկացվել է առարկայական օլիմպիադա անգլերեն և ռուսերեն առարկաներից : Մարզային փուլին մասնակցել են ռուսաց լեզվից Շահինյան Եվա VIIIա, Համբարձումյան Ալլա IXա,իսկ անգլերենից մարզային փուլին կմասնակցեն Հակոբյան Նարեն IXա և Դիլոյան Մանեն VIIIբ:Օրինակելի դասեր են կազմակերպել Մ.Ավետիսյանը VIIա դասարանում,թեման Ամերիկա,Կ.Մարտիրոսյանը VIIIբ դասարանում,թեման Կրիլովի առակները,Գ.Թումասյանը IXա դասարանում,թեման

Երաժշտությունը գրականության մեջ:Լ.Պետրոսյանը և Կ.Մարտիրոսյանը կիսամյակի ընթացքում մասնակցել են տարբեր սեմինարների և ստացել հավաստագրեր: Դեկտեմբեր ամսվա վերջում մեթոդմիավորման բոլոր անդամները կատարել են կիսամյակային աշխատանքների ամփոփում:

Դեկտեմբեր ամսին մեթոդական միավորման նիստում ամփոփվում են առաջին կիսմյակի կատարած աշխատանքները:Ուսուցիչները աշխատում են թեմատիկ պլաններով,թերացումներ չկան:

Օտար լեզուների մեթոդ միավորման

նախագահ՝ Մ.Ավետիսյան